

ԿՐՈՆԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գայանե Վարդանյան

«Միայն բնության մասին մակերեսային գիտելիքները կարող են մեզ հեռացնել Աստուծուց և ընդհակառակը՝ ավելի խոր և հիմնովին գիտելիքները մեզ վերադարձնում են ՆՐԱ մոտ»

Ֆ. Բեկոն

Դարեր շարունակ կրոնը և գիտությունը գոյատևել և զարգացել են առանց որևէ հակասության: Գիտնականը և հավատացյալը, որպես կանոն, միավորված են եղել մեկ անձի մեջ: Կրոնի և գիտության միջև փոխհարաբերությունների պատմությունը սկիզբ առավ Եվրոպայում 17-18-րդ դարերում, երբ բնական գիտությունների զարգացումը սրեց պայքարը քրիստոնեական կրոնի և գիտության միջև:

Աշխարհիկ գիտության և մշակույթի մեջ կրոնն ընկալվում է որպես կույր հավատ: Պատմական տեսակետից՝ անցյալի որոշ փիլիսոփաներ եւ գիտնականներ, հանդես են եկել որպես կրոնական գաղափարների դեմ պայքարողներ: Այնուամենայնիվ, պետք է խուսափել նման տեսակետից, այսինքն՝ անցյալի նմանատիպ դիրքորոշումից:

Ակնհայտ է, որ կրոնն ու գիտությունը ունեն երկու տարբեր նպատակներ, երկու տարբեր ձևերի ճանաչում, հուսալիության երկու տարբեր չափանիշներ: Դրանք լիովին անկախ են և չեն կարող ստուգվել միմյանց կողմից:

Գիտությունը՝ ժամանակակից մտածողության մեջ ձևավորվել է 16-17-րդ դարերում: Պատմական զարգացման ընթացքում նրա ազդեցությունը դուրս է եկել տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման շրջանակներից: Գիտությունը դարձել է կարևորագույն սոցիալական, հումանիտար ինստիտուտ, որն իր նշանակալից ազդեցությունն է ունեցել հասարակական բոլոր միջավայրերի և մշակույթի վրա: Գիտությունը ճանաչողական գործունեության հատուկ տեսակ է՝ ուղղված բնության, հասարակության և մտածելակերպի վերաբերյալ օբյեկտիվ համակարգված և հիմնավորված գիտելիքների ստացման, ճշտման և ստեղծման շղթայա-

կան կապի վրա: Գիտությունը զարգացող գիտելիքների համակարգ է: Այն տեխնիկական իրողություն է ու չի պարունակում բարոյական և էթիկական սահմանափակումներ: Քննարկենք օրինակ մաթեմատիկական գիտելիքներով զինված անհատի վարքը, որը կարող է ունենալ կամ բարոյական բարձր արժանիքներ կամ լինել բարոյալքվածի մեկը: Անկախ բարոյական հատկանիշներից՝ նա կարող է արագ և վարժ լուծել բարդ մաթեմատիկական խնդիրներ, որը բնորոշում է նրա գիտելիքները գիտության ասպարեզում, բայց չի վկայում նրա բարոյական արժանիքների մասին: Իսկ կրոնը բերում է բարոյական կատարելության: Հավատքով ապրող մարդը անկախ, իր գիտելիքների և հմտությունների աստիճանից, միշտ բարոյապես ավելի բարձր է:

Գիտական իմացությունները պետք է արտաքին ապացույցներ ունենան, իսկ հավատը բնութագրվում է ներքին ուժով: Գիտությունը հիմնված է արտաքին, զգայական փորձի վրա, հավատը հիմնված է ներքին, հոգևորի վրա:

«Հավատքն է հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է» (*Եբրայեցիս 11.1*):

Գիտությունը և կրոնը միասնական են և նրանց անկախությունը կապված է Աստծո և աշխարհի անկախության հետ: Լոմոնոսովն իր ժամանակին նշում էր. «Սխալ է այն մաթեմատիկոսը, որը ցանկանում է չափել Աստծու կամքը կարկինով, և սխալ է այն աստվածաբանը, որը կարծում է, թե կարելի է քիմիա և աստղագիտություն սովորել Սաղմոսագրքում»:

Գիտությունը ճանաչում է աշխարհը իր տարրերով և կառուցվածքային մասերով, բայց չի ամբողջացնում այն, որպես միասնություն և չի կարող լինել բացարձակ: Բացարձակ լինելը չի կարող նյութական աշխարհի որևէ տարր, մասնիկ կամ ամբողջ նյութական աշխարհը: Բացարձակ լինելը, հոգևոր առումով, հատուկ է միայն Արարչին: Կրոնը, իմանալով Աստծուն, բացահայտում է աշխարհի և մարդու կապը՝ ընդունելով Աստծուն որպես գերբնական սկզբունք, որպես ավելի բարձր ուժ: Հետևաբար, գիտության և կրոնի միջև, ըստ էության, գոյություն ունի խոր կապ և ընդհանուր հիմք: Բնական գիտությունները որպես մասնագիտացված գիտելիքների աղբյուր, համաաշխարհային տեսանկյունից, ունեն կրոնական բնույթ, այսինքն՝ կախված են հոգևոր շահերից և հիմնված են անհատների, ինչպես նաև ամբողջ դարաշրջանի հավատքի

վրա: Հետևաբար խնդիրը այնքան գիտական չէ, որքան աշխարհայացքային: Գիտությունը՝ կրոնական զգացմունքների խորությունն է, որն օգնում է մեծ գիտնականին հայտնագործություններ կատարել, քանի որ այն, ինչպես բացատրում էր Նիկոլայ Կոպեռնիկոսը՝ հոգևոր մեծ բավականություն է պատճառում տիեզերքի Ամենակարող Արարչին:

Կրոնը հասարակական գիտակցության ձև է, աշխարհայացք է, որը հիմնված է գերբնական ուժերի նկատմամբ ունեցած հավատի վրա: *Կրոնը* կարելի է սահմանել նաև որպես մարդու և Աստծո միավորման մասին գիտություն և կազմակերված երկրպագում:

Գալիլեյո Գալիլեյո, Իսահակ Նյուտոնը, Լոմոնոսովը հավատում էին Արարչի գոյությանը: Նրանց հավատը չէր հակասում գիտության հանդեպ ունեցած նրանց հետաքրքրությանը: Չնայած այն բանին, որ հոռմեական կաթոլիկ եկեղեցին դատապարտեց Գալիլեյին այն գաղափարի համար, որ Երկիրը պտտվում է Արևի շուրջ, Գալիլեյոյի տեսակետը բոլորովին չէր հակասում Աստվածաշնչին, բայց այն հակասում էր ժամանակի եկեղեցական դավանություններին: Հիշենք Գալիլեյոյի խոսքերը. «Գիտությունը խոսում է այն մասին, թե ինչ կառուցվածք ունի երկինքը, իսկ կրոնը՝ այն մասին, թե ինչպես պետք է այնտեղ հասնել»: Մագիստրոս Պահլավունին նույնպես կարևորում էր, որ բնագիտությունն ու նրա բոլոր ճյուղերը պետք է նախապատրաստեն մարդկային միտքը «բնությունից վեր գտնվող» գերագույն գոյի՝ Աստծո ճանաչման համար: Նա ընդունել է Աստծո գոյության տիեզերաբանական ապացույցը, համաձայն որի՝ բնության, որպես Աստծո ստեղծագործության ճանաչումով, կարելի է ըմբռնել նրա՝ Արարչի էությունը:

Այսօր էլ բազմաթիվ գիտնականներ ոչ մի հակասություն չեն տեսնում Արարչին հավատալու և գիտության միջև: Իսահակ Նյուտոնի ապրած ժամանակաշրջանում կրոնն ու գիտությունը դեռ բաժանված չէին և գիտությամբ զբաղվում էին հոգևորականները: Ինքը՝ Նյուտոնը, ուներ աստվածաբանական կրթություն ու հաճախ էր կրկնում. «Մեխանիկայի օրենքները ես սահմանում եմ՝ ելնելով Աստծո օրենքներից»:

Աշխարհի մեծագույն տեսական ֆիզիկոսներից մեկը՝ Ալբերտ Էյնշտեյնը, 20-րդ դարի կեսերին գրեց. «Որքան շատ հայտնագործություններ է անում գիտությունը ֆիզիկական աշխարհում, այնքան ավելի շատ ենք եզրակացնում, որ դրանց լուծումը թաքնված է հավատքի մեջ»:

Կրոնը և գիտությունը բոլորովին չեն բացառում միմյանց ընդհակա-

ռակը՝ դրանք լրացնում են միմյանց և հանդիսանում են բնագիտական առարկաների ուսուցման հիմք:

Ուսուցումը՝ անցյալի փորձի արդյունքում ձևավորված ադապտիվ, անհատական վարքի փոփոխությունն է: Այդ փորձի ձեռքբերումը պայմանավորվում է ճանաչողական դրդապատճառներով և նպատակներով: Ուսուցման շնորհիվ մարդու գիտելիքները թարմանում են, ձեռք են բերվում նոր հմտություններ և կարողություններ, որոնք հանգեցնում են առավել հարմարվողական վարքի ձևավորմանը:

Բնագիտական առարկաների ուսուցումն էլ բարդ գործընթաց է, որը գիտելիքներ հաղորդելուց զատ պետք է ձևավորի ճիշտ աշխարհայացք: Գիտական տեսակետից ուսուցումը պետք է օգնի կողմնորոշվել կյանքի արագ փոփոխվող իրավիճակներում, ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և կիրառել դրանք գործնական խնդիրների լուծման համար, ինքնուրույն և քննադատաբար մտածել, տեսնել ծագող խնդիրները և օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները՝ փնտրել դրանց լուծման ռացիոնալ ուղիները: Անհրաժեշտ է նոր իդեաներ արտադրել, ստեղծագործաբար մտածել, գրագետ աշխատել ինֆորմացիայի հետ, կոնկրետ խնդրի լուծման համար հավաքել անհրաժեշտ ինֆորմացիա, վերլուծել և անել անհրաժեշտ հետևություններ, գտնված լուծումը համեմատել նման կամ այլընտրանքային լուծումների հետ, վիճակագրական և տրամաբանական օրինաչափություններ հայտնաբերել, հիմնավորված եզրակացություններ անել, կիրառել գտնված լուծումը նմանատիպ այլ խնդիրների լուծման ժամանակ: Գործնական հարաբերություններ ստեղծել ցանկացած խմբի հետ աշխատելիս, կանխարգելել հակամարտությունը կամ հնարավոր քիչ կորուստներով դուրս գալ առաջացող կոնֆլիկտներից: Այս բոլորի հետ միաժամանակ անհրաժեշտ է ձևավորել քրիստոնեական աշխարհայացք՝ հավատք դեպի Արարիչը:

Փիլիսոփայության դասականներ՝ Թոմաս Կունին (1922- 1996) և Պոլ Ֆեյերաբենդին (1924 թ. - 1994) բացատրում էին, որ սկզբունքորեն այն ամենը, ինչը ճիշտ է համարվում այսօր, կարող է դառնալ կեղծ: Գիտությունը նախապես ստեղծվել է անձի կողմից, որը կարող է սխալ լինել: Եվ դա նորմալ է: Ի դեպ, ըստ որոշ աղբյուրների, Գալիլեոյի աշխատությունների մոտ 40 տոկոսը սխալ էին: (Գալիլեոն պնդում էր, որ ազատ անկման արագացումը կախված չէ մարմինների զանգվածից: Բայց, իրոք, կախված է: Բանն այն է, որ այս կախվածությունը աննշան է: ազատ ան-

կում ապրող մարմնի զանգվածը աննշան չափով փոքր է, քան երկրի զանգվածը):

Բնական գիտությունների և կրոնի միջև գոյություն ունեցող հակամարտությունը եղել է, կա և երկար կշարունակվի, բայց գիտությունը չի կարող ժխտել Արարչի գոյությունը:

Գիտությունը առանց կրոնի կաղ է, առանց գիտության կրոնը՝ կույր, ասել է Ալբերտ Էյնշտեյնը: Կրոնի նպատակն է վեր հանել աշխարհը ընկալման միասնության գաղափարը մարդու մոտ՝ առաջարկելով գիտելիքներ, հավատքով ընկալված յուրահատուկ աքսիոմներ, որոնք խորացվում և թարմացվում են Աստծո հետ անձնական հաղորդակցման գործընթացում: Այսպիսով, գիտությունը՝ գիտելիքները ներկայացնելով փաստերի տեսքով, նպաստում է երևույթների նոր տեսակետների առաջացմանը:

Ցանկացած բնագիտական դասընթաց, գիտելիքների հաղորդմանը զուգահեռ, պետք է հանգի այն մտքին, որ անընդունելի է ժխտել Երկրի ասվածաշնչյան արարումը՝ հիմնվելով մարդու կենդանական ծագման վրա :

Ընդունելով Աստծո գոյության տիեզերաբանական ապացույցը՝ կարելի է ըմբռնել նրա որպես Արարչի էությունը:

Կենսաբանությունը գիտություն է, որը չի կարող բացառել Աստծո՝ Արարչի գոյությունն ու նրա դերը երկրի ստեղծման գործընթացում: Ամեն ինչ, լինի դա մասնիկ կամ ամբողջություն, ինչպես աշխարհն ու ամբողջ մարդկությունը, ամենից առաջ ստանում են Աստծուց մի սաղմնային յուրահատկություն, որը հիմքն է տեսակների կատարյալ ինքնության: Սա այն գիտությունն է, որն ամենից շատ է առնչվում մարդու և առհասարակ բոլոր կենդանի օրգանիզմների հետ: Կենսաբանորեն կերելի է ընդունել, որ մարմինը նյութական է ու ապրում է պատմական զարգացում, բայց հոգին՝ ոչ, որ գենը, որը բոլոր հատկանիշների նյութական կրողն է, ինֆորմացիան փոխանցում է սերունդներին, բայց այս ամենի հիմքը ի սկզբանե Արարիչն է:

Գենետիկայի ինստիտուտի (Մինեսոտայի) գլխավոր պրոֆեսոր Էնդրյու Անդերսոնը խոստովանում է, որ այսօրվա գենետիկական դարձել է կիրառական գիտություն: Նա գրում է. «Մենք կարող ենք փոխել գեների հարաբերակցությունը: Հետագայում դրանք կարող ենք փոխարինել: Սակայն գենետիկ վերահսկումը կարող է օգտագործվել չար նպատակ-

ների համար: Դրա համար էլ կարևոր է օգտագործել աստվածաշնչային ուսուցումը գենետիկ հսկողության ծրագրերի մշակման մեջ ... Որպես քրիստոնյա, ես կարծում եմ, որ մարդը ավելին է, քան ֆիզիկական և քիմիական տարրերի համադրությունը: Մարդը՝ Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված հոգևոր ստեղծագործություն է, ուստի նա պետք է հաշվի նստի Աստծո կամքի հետ և պատասխանատու լինի նրա համար»:

Քննարկելով կյանքի ծագման առեղծվածը, ուսուցման պրոցեսում անհրաժեշտ է մեկնաբանել, որ *առաջին կենդանի օրգանիզմները պետք է շարք բարդ կառուցվածք ունենային: նրանք պետք է կարողանային վերարտադրվել, ինչի համար անհրաժեշտ էր գենետիկական ինֆորմացիա, ինչպես նաև կենսաբանական հատուկ մեխանիզմ, որը կկարողանար ճշգրտորեն կրկնօրինակել այդ ինֆորմացիան: Եթե ընդունենք, որ դրանք անգամ պարզագույն կենդանական բջիջներ էին, ապա նրանք էլ պետք է ունենային մոլեկուլային կառուցվածք, նոր բջջի բոլոր կառուցվածքային տարրերը ստեղծելու համար, ինչպես նաև պետք է ունենային ինչ-որ մեխանիզմներ / ֆոտոսինթեզ, քեմոսինթեզ / էներգիա կլանելու և օգտագործելու համար: Իսկապես հնարավոր չէր, որ պարահականորեն ձևավորվեին ֆոտոսինթեզ կամ քեմոսինթեզ իրականացնող այդպիսի բարդ մեխանիզմներ անկենդան նյութից: Պարահական պրոցեսների արդյունքում նման մեխանիզմների ձևավորման հավանականությունը չափազանց փոքր է: Կարելի է մեջբերում անել նաև Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանի մտքերից. «Աստված ոչ թե միանգամից, այլ ժամանակի հասկացության մեջ ստեղծում է տիեզերքը: Լույսի ստեղծումով սկսվում է այդ ժամանակը, և մի՞թե «եղիցի՛ լույս» հրամանը և դրան հաջորդող զարմանահրաշ արդյունքը՝ «եղև լույս», չի՞ նմանվում այն սկզբնական զանգվածային ատոմի պայթումին, որի մասին են խոսում գիտնականները՝ համարելով այն իբրև սկիզբ տիեզերքի առաջացման»:*

Անհրաժեշտ է ուսուցման գործընթացում վեր հանել այն միտքը, որ քանի դեռ գիտությունը չունի իրական ապացույցներ տիեզերքի ծագման եւ զարգացման և դրա մեջ կյանքի գոյության մասին, բնական գիտությունների և կրոնի միջև գոյություն ունեցող հակամարտությունը կշարունակվի, և գիտությունները չեն կարող ապացուցել, որ Արարիչը գոյություն չունի: Էվոլյուցիայի տեսությունը չի հակասում եկեղեցու ուսուցմանը և կարող է համարվել որպես վարկած մարդու մարմնի ծագման հարցում: Առկա է վեհություն այն տեսակետում, որով կյանքն իր տարբեր

դրսևորումներով Արարչի ձեռքի գործն է: Ստեղծողը ի սկզբանե ստեղծել է մեկ կամ սահմանափակ թվով ձևեր... նման պարզ սկզբունքից առաջանում են և շարունակում են առաջանալ անսահման ձևեր՝ ամենագեղեցիկ և ամենակատարյալ:

Այսպիսով, ուսուցման ընթացքում անհրաժեշտ է միավորել Աստծուն եւ էվոլյուցիան: Պետք է նշել, որ Աստված օգտագործեց էվոլյուցիայի գործընթացը՝ մարդկության զարգացման համար: Աստվածաշնչում ասվում է, որ յուրաքանչյուր տեսակ վերարտադրում է իր նմանին և չի կարող վերարտադրել մեկ ուրիշ տեսակ: Ըստ Աստվածաշնչի. «Թող երկիրը ցորեն բերի, հացը, սերուցք տվողը [իր տեսակով և նմանությամբ] և պտղատու ծառ, որտեղ նրա սերմը երկրի վրա է: Եվ այդպես եղավ »(Ծննդոց 1.11, տես հավելյալ Ծննդոց) 1.12, 21, 24, 2.

Եվ իսկապես, եթե խոսենք այն բանի մասին, որ մարդը երկրի վրա հայտնվել է էվոլյուցիայի արդյունքում, ապա հաշվի առնելով մուտացիաների հաճախականությունը և նախնական բջիջներից՝ մարդ ստեղծելու համար անհրաժեշտ կենսաքիմիական պրոցեսների արագությունը, ապա պետք կգար ավելի շատ ժամանակ, քան մեր տիեզերքի տարիքն է: Քանի որ ամբողջ տիեզերքը չունի հավերժական էներգիա, հետևաբար պետք է ենթադրել, որ այս ամենի «հետևում» կա Հոգի, ով ունի միտք և ինքնագիտակցություն:

Հավանաբար, ամեն մի լուրջ ու խոհուն մարդ գիտակցում է, որ անհրաժեշտ է ճանաչել բնությունը, զարգացնել գիտելիքները և հավատքն առ Աստված այնպես, որ մարդու հոգու բոլոր ուժերը միաձուլվեն կատարյալ ներդաշնակությամբ:

Միտքս ավարտեմ հանրահայտ Մաքս Պլանկի խոսքերով. «Կրոնը մարդու կապն է Աստծո հետ: Հոգու ճշմարիտ խաղաղությունը և «ամենամաքուր» երջանկությունը կարող է երաշխավորված լինել միայն Աստծո հետ կուռ միության պարագայում, երբ կա բացարձակ հավատ Նրա ամենազորության և մեզ օգնելու պատրաստակամության նկատմամբ»:

Գրականություն

1. From the book *The Historian's History of the World*, Vol. IX, 1904
2. 2. Мень А. В. История религии: пособие для системы доп. образования учащихся: в 2 кн. / А. В. Мень. - М.: Форум: ИНФРА-М, 1999.
3. Армстронг; пер. с англ. [К. Семенов]. - 2-е изд. - М.: Алпина нон-фикшн, 2010.
4. Крон-Пресс, 1996. Религиозные традиции мира.
5. Бертольд Брехт «Жизнь Галилея».
6. Սուրեն Գրիգորյան, (2006). Ասույթներ. «Լուսաբաց հրատարակչատուն».
7. <http://www.klikovo.ru/books/45077/index.html>
8. <http://newfrazza.ru/tegi-metki/religiya-i-nauka>
9. From the book *The Historian's History of the World*, Vol. IX, 1904.

ԿՐՈՆԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Գայանե Վարդանյան

Քանալի բառեր՝ Արարիչ, Աստված, կրոն, հավատ, գիտություն, ուսուցում, բնագիտություն, Տիեզերք

Համադրելով կրոնի և գիտության սահմանները, մենք գալիս ենք եզրակացության, որ դրանք սոցիալական կյանքի երկու ասպեկտներ են, որոնք հոգևոր մշակույթի տարբեր ոլորտներ են և կարող են գոյություն ունենալ կողք կողքի՝ լրացնելով մեկը մյուսին: Բնագիտական առարկաների ուսուցման գործընթացը չի կարող լինել միայն գիտելիքների հաղորդման գործընթաց, այն պետք է սերտորեն կապված լինի հավատի, քրիստոնեական դաստիարակության հետ:

Անկենդան և կենդանի բնության տարրերը միասնական են, և դրա մեջ պետք է տեսնել ողջ Տիեզերքի ամբողջությունն ու Արարչի կամքը: Կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր պայմանը ճանաչողական և մտավոր գործունեության ակտիվացումն է, որի արդյունքն էլ կլինի հասարակության համար բազմակողմանի զարգացած և քրիստոնեական հավատով անհատի ձևավորումը:

ВАЖНОСТЬ РЕЛИГИИ В ПРЕПОДАВАНИИ ЕСТЕСТВЕННЫХ НАУК

Гаяне Варданян

Ключевые слова *Творец, Бог, религия, вера, наука, обучение, естествознание, Вселенная*

Объединяя границы религии и науки, мы приходим к выводу, что это два аспекта общественной жизни, которые являются различными сферами духовной культуры и могут существовать бок о бок, наполняя друг друга. Учение о естественных науках не может быть только процессом передачи знаний, оно должно быть тесно связано с христианским воспитанием

Элементы живой и не живой природы объединены, и в них должны быть видны вся Вселенная и воля Творца. Важным условием повышения эффективности учебного процесса заключается в формировании всесторонней и гармонично развитой христианской личности .

THE IMPORTANCE OF RELIGION IN TEACHING NATURAL SCIENCES

Gayane Vardanyan

Keywords *Creator, God, religion, faith, science, studying, natural science, universe*

By combining the boundaries of religion and science, we come to the conclusion that these are two aspects of social life, which are different spheres of spiritual culture and may exist side by side, filling each other. The teaching of natural sciences can not only be based on knowledge transfer, it should be closely connected to the belief and the Christian education. The non-living and living elements are united, the whole universe and the will of Creator must be seen in it. The importance of raising the effectiveness of the educational process is the activation of cognitive and intellectual activities, the result of which will be the formation of a versatile developed individual with Christian faith.